ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության մաքսային վարչության և Մոլդովայի Հանրապետության մաքսային վերահսկողության պետական մաքսային դեպարտամենտի միջև մաքսային փաստաթղթերի և մաքսային ապահովումների փոխադարձաբար ճանաչման վերաբերյալ

Հայաստանի Հանրապետության մաքսային վարչությունը և Մոլդովայի Հանրապետության մաքսային վերահսկողության պետական մաքսային դեպարտամենտը, այսուհետ՝ Պայմանավորվող կողմեր,

նպատակ ունենալով հեշտացնել և արագացնել ուղևորահաղորդակցության և բեռնահաղորդակցության մաքսային վերահսկողությունը,

համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

Հոդված 1

Պայմանավորվող կողմերը, սահմանով անցնող փոխադրամիջոցները, բեռները, ուղեբեռները, փոստային առաքումները, տարադրամը, վճարային այլ միջոցներն ու տարադրամային արժեքները, կապահովեն Պայմանավորվող կողմերի պետությունների մաքսային և տարադրամային կանոններին համապատասխանող փաստաթղթերով, որոնք կիրառվում են բեռնային և ուղևորային հաղորդակցության, ինչպես նաև փոստային փոխանակման մեջ:

Հոդված 2

Պայմանավորվող կողմերը փոխադարձաբար կճանաչեն միմյանց մաքսային փաստաթղթերը, մաքսային կապարակնիքները, կնիքների և դրոշմների նմուշօրինակները և փոստային առաքումների, բեռների և փոխադրամիջոցների վրա պաշտոնական նշանները: Նրանք կարող են նաև փոխադարձաբար ճանաչել միմյանց առաքիչ և տրանսպորտային կազմակերպությունների կապարակնիքները և կնիքները ու դրանց պաշտոնական նշանները փոխադրամիջոցների վրա:

Հոդված 3

Պայմանավորվող կողմերը միմյանց կփոխանցեն 2-րդ հոդվածում նշված մաքսային փաստաթղթերի և մաքսային ապահովումների

նմուշները, ինչպես նաև այն ապրանքների ցուցակները, որոնց ներմուծումը, արտահանումը կամ տարանցումը իրենց տարածքներով արգելված է կամ սահմանափակված:

Հոդված 4

Պայմանավորվող կողմերը ժամանակին միմյանց կտեղեկացնեն մաքսային օրենսդրության, կանոնների, ծառայողական հրահանգների, մաքսային փաստաթղթերի ու ապահովումների ձևերի մեջ կատարված փոփոխությունների և լրացումների վերաբերյալ:

Հոդված 5

1. Հայտարարագրում պահանջվող ապրանքների և փոխադրամիջոցների տեղափոխումը Պայմանավորվող կողմերի մաքսատների միջև կկատարվի բեռնային մաքսային հայտարարագրի օգտագործմամբ, որն իր ձևով նույնական է Եվրահամայնքի միասնական վարչական փաստաթղթի ձևին:

2. Ապրանքների և փոխադրամիջոցների հայտարարագրման կարգը որոշվում է, համապատասխանաբար, Հայաստանի Հանրապետության և Մոլդովայի Հանրապետության օրենսդրությամբ:

Հոդված 6

Սույն Համաձայնագրի կատարման և մեկնաբանման հետ կապված բոլոր վիճելի հարցերը Պայմանավորվող կողմերի միջև լուծվում են խորհրդակցությունների և համաձայնեցումների միջոցով:

Հոդված 7

Մաքսային փաստաթղթերը լրացվում են առաքող երկրի օրենսդրությամբ նախատեսված՝ մաքսային փաստաթղթերի կազմման համար նախատեսված լեզվով:

Հոդված 8

Մաքսային համագործակցության խորհրդի (Customs Cooperation Council) ստանդարտների և հանձնարարականների հիման վրա՝ Պայմանավորվող կողմերը կձգտեն մաքսային փաստաթղթերի աստիճանական միասնականացմանը և դրանց պարզեցմանը:

Հոդված 9

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում այն ստորագրելու պահից և գործում է 5 տարի ժամկետով, որից հետո ինքնաբերաբար կերկարաձգվի հաջորդ հնգամյա ժամկետի համար, եթե Պայմանավորվող կողմերից ոչ մեկը վերջնական ժամկետը լրանալուց 6 ամիս առաջ գրավոր չի տեղեկացնի Համաձայնագրի գործողությունը դադարեցնելու իր ցանկության մասին:

Կատարված է Մոսկվա քաղաքում 1996 թվականի փետրվարի 15-ին, երկու օրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն, մոլդովերեն և ռուսերեն, ընդ որում բոլոր երեք տեքստերն էլ հավասարազոր են:

Հայերեն և մոլդովերեն տեքստերի մեկնաբանման ժամանակ տարաձայնությունների դեպքում որպես հիմք է ընդունվում ռուսերեն տեքստը:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 1996 թվականի փետրվարի 15-ից: